

2284

3763

92

Կ ԴԵԿՏԱՐՈՎ

Բ Ո Ռ Ը  
ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ  
Դ Ե Մ

619  
7-32

ՊԵՏՂԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ

619  
7-32

30 JUL 2010

Վ. ԴԵԿՏԱՐՈՎ



Բ Ո Ռ Ը  
ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

18760

ՄԵՏՏՐԱՏ

1933

ՆՈՒՅՆ

012 APR 2013

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկայումս մեր գյուղատնտեսության հիմնական խնդիրն է՝ սոցիալիստական անասնաբուծության համար ստեղծել առողջ պայմաններ:

Այդ կապակցությամբ սուր կերպով դրվում է կենդանական հումքի հարցը, վորը գործածվում է կաշու և կաթնամսային արդյունաբերության մեջ:

Անասնաբուծության լուրջ վնասատուներ համարվում են խոշոր յեղջյուրավոր անասնի և յեղջերվի կաշու բուռերը: Վերջիններս ամեն տարի միլիոններով վնասներ են հասցնում սոցիալիստական անասնաբուծությանը, դառնալով նրա պատուհասը: Բուռի վնասները Խ.Ս.Հ.Մ.-ում տարեկան հաշվում են ավելի քան 130 միլիոն ռուբլի: Դրանից 67 միլիոնը կորցնում է կաշու արդյունաբերությունը, 45-միլիոնը՝ կաթնեղենինը և 20 միլիոնը՝ մսինը:

Այստեղից պարզ է, վոր Խ.Ս.Հ.Մ համար մասսայական պայքարը բուռի դեմ տնտեսական ահազին նշանակություն ունի: Յեթե պայքարի համարայատասխան միջոցներ ձեռք առնվեն բուռի դեմ, ապա կորուստները չստ չնչին չափերի կհասնեն:

Հաշվի առնելով այս ամենը, ամեն մի խորհատնեսություն և կոլտնտեսություն (պայքարին մասնակից դարձնելով նաև մենս-



37947.12

տընտեսատերերին) պետք է կազմակերպված ձեռնարկէն բոռի դեմ պայքար մղելու միջոցառումներին:

Այս կամպանիայի հաջող իրացումը շատ քերտ կապ ունի գործի լավ կազմակերպման հետ:

Ներկա տարում, ինչպես նաև մոտակա տարիներում սոցիալիստական սեկտորի բոլոր տնտեսություններում անխտիր նախատեսվում է պլանային արտադրական միջոցառումներ կիրառել բոռի դեմ: Բայց այդպիսի միջոցառումները հնարավոր են միայն լայն հասարկության աջակցութեամբ:

Վերջինս պետք է իմանա, թե ինչ բան է բոռը, ինչ վնասներ է պատճառում և ինչպե՞ս պետք է պայքարել նրա դեմ:

Բոռի դեմ պայքար մղելու մասին հանրամատչելի գրականության պահանջը այնքան մեծ է, վոր 1930 թվին լույս տեսած այս դիրքը բոլորովին սպառվել է և այժմ վերահրատարակվում է:

Նկատի առնելով, վոր այս գրքույկը նախատեսված է խորհրդային տնտեսականների, կոլտընտեսականների և մենաշխատանքի լայն մասսաների համար, աշխատել եմ մատչելի լեզվով շարադրել բոռի դեմ պայքարելու բոլոր գիտելիքները: Բայց միևնույն ժամանակ գրքույկը գիտական է այն չափով, վոր կարող է պետք դալ նաև գյուղական ակտիվին և տնտեսափարներին:

## ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԳԻՏԵՆԱԼ ԲՈՌԻ ՄԱՍԻՆ

Բոռը— գյուղատնտեսության պատուհանն է: Նա մեծ տանջանքներ է պատճառում անասուններին՝ մասնավորապես կովերին, յեղջերուներին, ձիերին և վոչխարներին: Բոռը խոշոր վնաս է հասցնում գյուղատնտեսությանը. նա արժեքազրկում է (կենդանիների) կաշին, պակասեցնում է կաթը և վատթարացնում է միսը:

Այժմ բանվորն ու կոլտնտեսականը կառուցում են իրենց պրոլետարական պետությունը: Նրանք են իրենց յերկրի տերն ու տնօրենը, նոր կյանքի կառուցողները:

Այժմ հարկավոր է պայքարել բարելավելու, առողջացնելու գյուղատնտեսությունն ու անասնաբուծությունը:

Կաշու արդյունաբերության գիտական հիմնարկների սկզբնական տվյալներով պետությունը միայն բոռի թրթուրներից վնասված կաշուց կորցնում է մոտ 67 միլիոն ուսուրլի: Վնասված կովերն ամենաառատ կաթնատվութայն միջոցին՝ մարտ, ապրիլ և մայիս ամիսներին կիսով չափ պակաս կաթ են տալիս: Պակաս վնասներ չի կրում պետությունը նաև մսից: Սովորաբար վնասված կովերի միսն ավելի նիհար է լինում: Մեջքի մասի յերեսը սառած—թարախակալված է լինում, վորը մորթելիս դեն են գցում:

Հիշենք ձիերի և վոչխարների բոռից առա-

Զացած գանազան հիվանդությունները: Հիշենք հյուսիսի յեղջերուներին, վորոնք չափազանց տանջվում են բոռերից: Հետևանքը լինում է հսկայական մնաս: Այս ամենը պետք է բավ իմանան ամեն մի գյուղացի և գեղջիուհի:

Հարկավոր է հիշել, վոր մորթած կովի կամ յեզի կաշին, յեթե յերկու յերեք անցք ունի, հաշվվում է յերկրորդ տեսակի, այսինքն՝ զնահատվում է 15% պակաս. նա անցքեր ունի մեջքի մասում, այսինքն՝ կաշու ամենազլխավոր տեղում: Յեթե առաջին տեսակի միջակ (առանց անցքերի) կաշին 20 ուրլի արժե. ապա անցքերովը զնահատվում է 17 ուրլի: Իսկ յեթե կաշին մինչև 6-7 անցք ունի մորթու մի քառորդի վրա, վորոնցից չորսը վողնաչարի վրա, այդպիսի մորթին անպետք է համարվում: Նա հաշվվում է յերրորդ տեսակի կաշի-35% եժան առաջին տեսակից, այսինքն՝ 13 ուրլի: Իսկ յեթե 7-ից ավելի ճեղքվածքներ ունի, այդպիսի կաշին հաշվվում է չորրորդ տեսակի, 60% օցած, քան առաջին տեսակը, այսինքն՝ 8 ուրլի:

Յեթե անասունները մորթվում են աշնանը, ապա մորթին ճեղքվածքներ չունի. դրանք կաշնվել են: Բայց հենց վոր սկսում են մորթին մշակել, իսկույն միացնող հյուսվածքներն ընկնում են և կաշին ստացվում է ծակերով: Այդ պատճառով էլ աշնան մորթվածների կաշու տեսակները հաշվի յեն ազնում:

Նույնը պետք է ասել կաթի նկատմամբ:

Կաթնադործարանին յուղ պատրաստելու համար կաթը հանձնելիս, առողջ կովից ստանալիք 20 կիլոգրամի փոխարեն բոռից մնասված կովերից ստանում ենք միայն 10 կիլոգրամ:

Կովերն ամառը բոռերից փախչում են սրտատակից: Նրանք ամբողջ որը քաղցած մնում են փարախում, ջրում կամ սովերի տակ:

Խ.Ս.Հ.Մ.—ում շատ քիչ վայրեր կան, վորտեղ բոռ չկա: Բոռն ապրում է մեր Միության համարյա բոլոր մասերում: Կենտրոնական մասում, Հյուսիսային Կովկասում, Անդրկովկասում, Ուկրայինայում, Կազակստանում և այլն, անտառային վայրերում, տափաստաններում և նույնիսկ հեռու հյուսիսում, չնայած նրա դժման կլիմային:

Բոռը տարածված է նաև արտասահմանյան բազմաթիվ յերկրներում: Վերջին տարիներում այնտեղ համառ կոթիվ են մղում բոռի դեմ:

Այս բոլորը պետք է հիշել, վորպեսզի պարզ պատկերացնենք բոռի պատճառած հսկայական մնասները: Այժմ անցնենք բուն հիվանդության և նրա պարագիտ-բոռի նկարագրությանը:

#### ԲՈՌԸ ՊԱՏՐԱՍ Ե ԼՈՒՅՍ ԱՇԽԱՐՀ ԳԱՆՈՒ

Բոռը մի իսկական պարագիտ է, այսինքն՝ միջատ, վորն իր ամբողջ կյանքում ապրում է ի հաշիվ մի ուրիշ կենդանի որդանիցմի:

Բոռը մոտ տաս-տասնըմեկ ամիս ապրում

ե մեր ընտանի կենդանիների որդանիզմում: Նա  
անվում է մարմնի հյուսթերով՝ ցավ ու վնաս  
պատճառելով կենդանիներին: Միայն շատ չըն-  
չին շրջան նա ապրում է կենդանու որդանիզմից  
դուրս: Կենդանու մարմնի մեջ բոռը թրթուրի  
կերպարանք ունի: Մարմնից դուրս գալով,  
դառնում է մի մեծ ճանճ: Թե իբրև թրթուր է  
թե իբրև ճանճ բոռն ապրում է ընդամենը մի  
տարի:

Գալիս է դարունը: Չյունը հալչում է. յե-  
րևում է առաջին կանաչը: Ամեն ինչ ձգտում է  
գեպի արևը, Չերմությունը, ողը: Հենց այդ  
ժամանակ էլ պարադիտները՝ բոռի թրթուրնե-  
րը, մինչ այդ կենդանու կովի կամ յեղջերվի  
մարմնի մեջ ապրելով, դուրս են գալիս՝ կաշին  
ծակելով: Այդ ծակերն անվանում են ուռեցք,  
կոշտեր, վորոչ տեղերում խիլեր: Վնասված կա-  
շու վրա դրանց անվանում են վորդունք, իսկ  
կաշին վորդնած: Վորոչ տեղերում նրանց ան-  
վանում են «մոզ»: Յերբ կովը նրանցից փախ-  
չում է, ասում են՝ կովը «մոզ է ընկել»:

Թրթուրը (վորդը) գտնվելով բաց վերջի  
մեջ, որտարասա է գետին ընկնելու: Այդ թրթ-  
ուրն ապրում է իր զարգացման հինգերորդ  
շրջանը: Այստեղից էլ հետևենք բոռի կյանքի  
զարգացմանը:

Գարնանը թրթուրները հասնում են իրենց  
լիակատար զարգացման կենդանու մեջքի և  
կողի մաշկերի հյուսվածքներում: Նրանց  
նուրբ, թափանցիկ թաղանթը հաստանում է

պնդանում է, իսկ շնչանցքերը՝ սևանում: Թրթ-  
ուրը, վորդի կերպարանք ունենալով, ավելի  
ու ավելի յե կարճանում և հաստանում: Նրա  
յերկարությունը հասնում է 28-30 միլիմետրի,  
ընդունում է անկանոն գլանի ձև: Տափակ փո-  
րը և ուռուցիկ մեջքը բաց դեղնավուն գյուն ու-  
նեն: Թրթուրը բաղկացած է մի շարք ողակաձև  
մասնիկներից (սիզմենտներից), ծածկված խի-  
տինային փշիկներով: Այս վիճակում թրթուրն  
ապրում է 35-45 օր: Վերին ողակի ծայրին  
գտնվում է մի անցք վարի մասում (տես նկ.  
1-թրթուրը):

Որեցօր թրթուրը դառնում է ավելի ու ա-  
վելի շարժուն: Նրա հետևի անդամիկները  
(սիզմենտները) շարժվում են գեպի վերջի բե-  
րանը: Այդ շարժումներն անցքի ծայրերը մաք-  
րում են թարախից և թարախի մի մասը դուրս  
է հոսում: Կենդանու մորթու անցքը հետզհետե  
լայնանում է: Թրթուրը գանդադորեն հարթե-  
լով իր ճանապարհը, դուրս է գալիս մարմնից  
կաշու վրա և ընկնում գետին: Մեծ քանակու-  
թյամբ թրթուրներ գետին ընկնում են առա-  
վոտներն արտատեղերում, դիշերները միայն  
բջերն են գետին ընկնում: Վայր ընկած թրթ-  
ուրները կարճում են իրենց անդամիկները,  
մերթ կծկվելով, մերթ ձգվելով: Նրանք սողում  
են գեպի մի հարժար տեղ: Միքանիսը մտնում  
են գետնի, ադրի, հարդի մեջ, մորոնելով բառ-  
վերոտ տեղ: Այստեղ մի քանի ժամից հետո նր-  
անք հանգստանում են: Նրանց թաղանթը պըն-

դանում, սեանում է: Այդ դրության մեջ նրանք մնում են 1-12 օր և պատրաստվում են հարսնյակի վերածվելու (տես նկ. 2.):

Հարսնյակ վիճակում թրթուրներն ապրում են 30-60 օր: Այս դրության մեջ նրանք սննդի կարիք չեն զգում: Նրանց արտաքին թաղանթն աստիճանաբար խորշոմում (կնճռոտում), պնդանում է: Նրա ներսում զարգանում է հասուն միջատը՝ հասուն բողբ, եղ կամ արու:


Տաք յեղանակին միջատներն ավելի շատ են դուրս դալիս: Բոլոր հարսնյակներից չե, վոր առաջանում են հասուն ճանճեր: Մեծ մասը վոչնչանում է խոնավ յեղանակին, թռչունների կեր դառնում և այլն: Միայն չնչին տոկոսն է դառնում հասուն ճանճ:

### ՀԱՍՈՒՆ ԲՈՒՐ

Հարսնյակն ունենում է մի ծածկոց, վորը հասունացած միջատը գլխով դեն է չարտում: Հարսնյակից դուրս է դալիս հասուն թևավոր ճանճը. այսինքն՝ բողբ: Մի քանի րոպեյից հետո բողբ ցամաքում է, փոում է իր թևերը և պատրաստ է թռչելու (տես նկ. 3.):

Բողբի յերկարությունն է 12-13 միլիմետր լայնությամբ բացած թևերով՝ 23-25 միլիմետր: Եզի յերկարությունը ձվադրով՝ 17 միլիմետր, գունը սև, դեղնանարնշապույն բծերով: Գլուխը ծածկված է սպիտակափուն մազերով վորը դեղնամոխրագույն է և ձգված: Նա լցված է սննդով, վոր բոռն ամբարեղ էր կովի

մարմնի մեջ թրթուր յեղած միջոցին: Հասուն ճանճը, բողբ ապրում է առանց վորևե սննդի: Նա չունի նույնիսկ բերնի անցք: Մարմինը՝



նկ. 1. a — Բողբ քրթուրը 5-յդ ստադիայում: b — Բողբի ձվիցը կովի մազի վրա ձ — Հասում ճանճ սգ c — Հարսնյակ մեծ գլխով, յերկու թևերով, ծածկված է կարճ թավ մազերով: Արուն փոքր է եզից:

Բողբ հարսնյակից դուրս դալուց մի քանի ժամ անց փորոնում է հակառակ սեռի իր նմաններին և բեղմնավորվում: Դրանից հետո արդեն եզը յերկու կամ յերեք ժամից հետո ընդունակ է ձու դնելու: Պայծառ, արև, տաք յեղանակին եզը ձու յե ածում հենց նույն կամ հետևյալ օրը:

Դրա համար եզերը թռչում են դեպի կովերը, նրանց մոտ իջնում են գետին՝ մոտենալով կենդանուն փոքրիկ թռիչքներով, վոս-

տյունների ձևով: Յերբեմն ուղղակի նստում են վոտքին, պճեղի կամ ծնկան շուրջը: Դուրս ցցելով ձվադիրը, բոուը նրանով բռնում է մազը և վրան դնում ձվերը: Յերբեմն եզը թռչկոտում է դեպի պառկած կովը և ձու յե դնում յետևի վոտներին, պճեղի մոտ, կարճ մազերին: Յեթե կովերը կանգնած չեն իրենց տեղում, այլ ման են գալիս, բոուի եզերը թռչում են նրանց շուրջը գետնի յեզերքով: Հարմար մոմենտին նրանք նստում են յետևի վոտքի ծնկան շուրջը և ձու դնում: Կովերը, նկատելով բոուի ներկայությունը, հաճախ վոտնահարում են, քացի յեն տալիս: Բոուը բարձրանում է և նորից հետապնդում: Յեթե բոուի եզին չի հաջողվում իր ուզած տեղը ձու դնել, նստում է առաջին վոտներին փորին կամ կողերին և հենց այնտեղ էլ ձու յե դնում: Չու դնելը շատ արագ է կատարվում, մի րոպեյում դնում է 30-40 ձու: Չվերը դնում են կանոնավոր շարքերով, մի քանի հատ ամեն մի մազին: Յերբեմն ամեն մի մազին դնում են մի ձու:

Եզն իր սեռական հասունության ամբողջ ընթացքում կարող է դնել մինչև 550 ձու: Ամենից շատ ձու ածում են տաք, արև որերին: Ընդհակառակը, մառախլապատ, խոնավ և ցուրտ որերին նրանք հաղվադեպ են ձու դնում: Քամի որերին նույնպես եզը ձու չի դնում: Սեռական հասունության շրջանը, այսինքն՝ հասուն ճանճի, բոուի կյանքը շատ յերկար չէ՝ 25 որից վաղ ավել: Իրանից հետո իր գործն ա-

վարտելով, ձու դնելով, շարունակելով իր սերունդը, բոու-ճանճը սատկում է:

Բոուի հասունանալու շրջանը, հասուն միջատների կյանքը ձու դնելը կախված է ամառվա տևողությունից և տեղական կլիմայական պայմաններից: Որինակ՝ Հյուսիսային Կովկասում հասուն բոուերը յերևան են գալիս մայիսի կեսին և շարունակում են թռչել մինչև ոգոստոսի 15-ը, նույնիսկ մինչև սեպտեմբերի 1-ը: Ուրալի միջին մասերում, Կազակստանում նրանք յերևան են գալիս հունիսի սկզբներին և շարունակում են թռչել մինչև ոգոստոսի վերջը և այն:

Հետևենք, թե ինչ է կատարվում ձու դրնելուց հետո:

ՊԱՐԱԶԻՏԻ ԹՐԹՈՒՐԸ ԿԵՆՊԱՆՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԵՁ

Չվերը՝ լուց դեղնազույն են փայլուն յերեսով: Նրանց ձևը ցույց է տրված 1 նկարում: Նրանք փոքր ինչ լայն են հիմքում: Չվերի միջին յերկարությունը յերեք քառորդ միլիմետր է: Լայնությունը՝ քառորդ միլիմետր է: Չվերը հասարակ աչքով հաղիվ նկատելի յեն և լավ նկատելի յեն խոշորացույց ապակով: Չվերը զրված են լինում կույտերով կամ մեկ-մեկ մազի վրա: 2-ճորից հետո (նայած ջերմությանը) ձվից առաջանում է փոքրիկ թրթուր: Մազի վրայով նա սողում է դեպի կաշին և նրա մեջ խցկվում: Այն տեղից, վոր թրթուրը ծակում է կաշին, արնաջուր է հոսում: Մի քանի որվա

ընթացքում այստեղ մնում ե խոցի և սզիի տեղը: Թրթուրի մեծությունն այդ ժամանակ ձվից մի քիչ փոքր է: Թրթուրը բաց մոխրագույն է, յերկարավուն, կազմված է անդամիկներից, խիտ ծածկված փշերով (դրանց կարելի չե տեսնել մանրադիտակով), ունենում են յերեք անցքեր՝ պաշտպանված յերկու յերեք մեծ փշերով և բերնի անցք՝ յերկու առանցքով զեպի գուրս ծոված: Բերնում գտնվում է մեծ ծուռ ատամ, վորը բերնի յերկու կզակներից գուրս ցցված է լինում:

Առաջ կարծում եյին, թե Թրթուրները մտնում են կովի մարմնի մեջ բերնի միջով: Կարծում եյին, թե կովն իրեն լիզելով, լիզելով վերցնում է Թրթուրները մազից: Կարծում եյին նաև, թե կովը կերի հետ կույ ե տալիս Թրթուրը կամ ձուն: Սակայն այժմ այդ հարցով զբաղված գերմանական և ամերիկական գիտնականներն ապացուցել են, վոր Թրթուրները կովի մարմնի մեջ մտնում են վոչ թե բերնի անցքից, այլ կաշու միջով: Լավ գիտնված Թրթուրը մազի վրայով սողում է դեպի կաշին և մազի հիմքում սկսում է բերնով ծակել կաշին: Նա աստիճանաբար խորանում է և մի յերկու ժամ աշխատանքից հետո արդեն անցնում է կաշվի տակը: Կյանքի այս մոմենտը բավական դժվար է Թրթուրի համար: Թրթուրների մեծագույն մասը կորչում է՝ անկարող լինելով անցնել պինդ, հաստ կաշվի տակ: Ընդհակառակը՝ Թույլ, նուրբ կաշի

ունեցող կենդանիների մոտ քիչ Թրթուրներ են կորչում: Անցնելով կաշվի տակ, Թրթուրները զարգանում են և վերջավորություններից անցնում դեպի մարմնի վերն ու առաջը: Հետևանքը այն է լինում, վոր Թրթուրները հասնում են կոկորդին, վորկորին, այդ որգանների հյուսվածքներին և պարանոցի մկաններին: Այստեղ կենդանու պարանոցի մասերում նրանք յերկար են ապրում, մաշկափոխ լինում և անցնում յերկրորդ շրջանը:

Թրթուրը յերկրորդ շրջանում ունի 3-13 միլլիմետր յերկարություն, գլանի ձև, թեթև սրված ծայրերում-ծածկված փշաթաղանթով:

Մի քանի ամսից հետո Թրթուրը յերկրորդ շրջանից անցնում է յերրորդ շրջանը:

Այդ շրջանում Թրթուրը յերբեմն գտնվում է կոկորդում, հենց մեջքին անցնելու նախորդակին: Յերկարությունը 12-16 միլլիմետր է, լայնությունը՝ մոտ յերեք: Փշեր ունի միայն բերանի մոտ:

Թրթուրն ուղղում է իր ընթացքը դեպի մեջքը: Կոկորդից շարժվում է կրծքավանդակի վրայով, կողոսկրերի մոտով ներսից դեպի մեջքը: Այս ճանապարհը Թրթուրը կատարում է հունվարին և փետրվարին, յերբեմն նաև մարտին: Հասնելով մեջքի մաշկի միացնող հյուսվածքին, Թրթուրն ընտրում է մի հարմար տեղ և կանգ առնում: Թրթուրի կանգ առած տեղում իսկույն ևեթ առաջ է գալիս մաշկի միացնող հյուսվածքի բորբոքում (ուռուց-

քով և ցավով) : Իրսում գոյանում է խիլ աղավնու ձվի չափ կամ նրանից ել մեծ : Մի յերկու յերեք որից հետո թրթուրները ծակում են կաշին ուռուցքի կենտրոնում և ուռուցքը փոքրինչ իջնում է : Մեջքի կաշին ծակելով, թրթուրն անմիջապես փոխում է մաշկը, այսինքն՝ իր զարգացման յերրորդ շրջանից անցնում է չորրորդը : Այս շրջանը տևում է վոչ ավելի, քան 8 որ : Մաշկափոխության միջոցին նա թաղանթը դեն է գցում, մնում է կաշու տակ :

Այս շրջանում թրթուրն ունի 13-18 միլիմետր յերկարություն և 3-6 միլիմետր լայնություն : Մարմնի յետևի մասում նա բավականաչափ սրվում է : Միգմենտներ (անդամիկները) թվով 2-ից միչև 9, ունենում են սուր փշեր :

Կաշու տակ, վորտեղ գտնվում է թրթուրը, առաջ է գալիս տեղական բորբոքում : Գոյանում է նոր միացնող հյուսվածք, վորը շրջապատում է թրթուրին վորպես պատյան կամ սոպրակ : Այստեղ թրթուրը մնում է մինչև նրա մարմնից դուրս գալը : Հաճախ թրթուրը լինում է հորիզոնական դրության մեջ, այսինքն կաշու յերկարությամբ և շատ հազվադեպ ուղղահայաց դիրքով, կաշու կտրվածքով, լայնությամբ : Բայց անհրոժեշտաբար միշտ յետևի ծայրը, շնչանցքներն ուղղված են դեպի անցքը : Թրթուրը շարունակ մաքրում է անցքը, վորպեսզի աղ խաղա շնչառության համար : Թրթուրի

կյանքի տևողությունը չորրորդ շրջանում հասնում է միջին թվով 25-27 օրվա : Այնուհետև թրթուրը նորից յենթարկվում է մաշկափոխության : Նրա թաղանթը դեն է ձգվում և մնում է պատյանի մեջ : Թրթուրն անցնում է հինգերորդ շրջանը, վորի մասին արդեն մենք սկզբում խոսել ենք :


Այստեղից պարզ յերևում է, թե ինչ բարդ ճանապարհ է անցնում բոռ-ճանճը : Վորպեսզի պայքարենք վնասատու պարազիտի դեմ, հարկավոր է ծանոթ լինել, ճանաչել նրա կյանքը : Այդ դեպքում միայն հաջողությունն ապահովված է :

#### ԿՈՎԻ ԲՈՌԻ ՎՆԱՍԸ

Հասուն բոռը ձու դնելիս ցավ է պատճառում կենդանուն : Մարմնի մեջ յեղած թրթուրները գրգիռ են առաջացնում :

Փախչելով հասուն միջատներից, կենդանին հաճախ քաղցած է մնում : Արտատեղից անասունը փախչում է դեպի ջուրը կամ սավերոտ տեղ, վորտեղ անց է կացնում ամառվա յերկար օրը : Արդյունքը լինում է այն, վոր կաթը պահասում է, ինքը նիհարում է : Բավական է մի յերկու եղ բոռ մոտենան նախիրին և հարձակվեն կովի վրա, վոր կովը սարսափի, սարսափն անցնի մյուս կովերին : Ամբողջ նախիրը սարսափով բռնված փախչում է առանց ճեմ նայելու : Այդ հողի վրա անասունները հաճախ վնասված քներ են ստանում :

18700




37947.14

Յեղեկ են դեպքեր, յերբ կովերը զառիվայրից գլորվել, մահացել կամ խեղդվել են: Բավական տարածութուն անցնելով, քառու զրտինքի մեջ, փրփուրը բերանին հարձակվում են ջրի վրա և չափից դուրս խմում: Պաղեցնում են մարմինը և մրսելով հիվանդութուններ ստանում: Բոլոր այդ անհանգիստ դրութունը գլուղացիներն անվանում են «մող ընկնել»:

Աշխատելով շրջաններում, յես հաճախ լաել եմ գլուղացիներից թե բոռի թրթուրը լինում է միայն լղար կովերի վրա: Դա ճիշտ է մասամբ: Իսկապես լղար կովերի կաշին թույլ է: Չվից դուրս յեկած թրթուրները հեշտությամբ անցնում են թույլ կաշուց, քիչ մասն է փոչնչանում, հետևաբար ավելի խիստ են վարակում կովին:

Ներս մտած թրթուրներն ել ավելի քիչ դիմադրության են հանդիպում լղար կովերի մարմնում: Դրա համար ել թրթուրների մեծ մասն այնտեղ ապրում է: Այնուամենայնիվ ինչ չաղության, տեսակի ու ցեղի յել լինի կովը, պետք է ամպայման լղարի, յեթե բոռը շատ ձու է ածել նրա վրա: Ընդհակառակը՝ պետք է ընդունել, վոր բոռի թրթուրները քայքայում են կովին. գտնվելով կենդանու մեջ, անհանգստություն են պատճառում, դրդում են և բորբոքում մարմնի վորոշ մասերը: Մնվելով մարմնի հյուսիսում, նրանք իրենց արտաթորություններով վարակում են կենդանու վողջ օրգանիզմը: Գտնվելով կաշու տակ, մեղքի վրա.

թրթուրներն առաջացնում են ամբողջ վողջաչարի բորբոքում և նյարդային համակարգության խանգարում: Կաշու անցքը բաց անելուն հետևում է թարախակալումը: Այդ թարախը մասամբ ծծվում է մարմնի մեջ և թունավորում նրան, սաստկացնելով կովերի նիհարությունը:



Նկ. 2. Բոռի անպետքաբաժկաշին

վորքան շատ լինի մարմնի մեջ ձվերի քանակն, այնքան այս յերևույթն ավելի խիստ կարտահայտվի: Բացի սրանից, թրթուրները փչացնում են կաշին և անպետքացնում (տես նկ. 2.):

## ՉԻՈՒ ԲՈՌԸ

Չիու հասուն բոռը մի քիչ փոքր (12-14 միլիմետր) և բարակ է յեղան բոռից: Փոքր ծածկված է գորշ-դեղնադույն մազերով: Առաջի մասը խիստ ձգված է: Եզը թուջելով ձիու կողմը, կամաց կաչում է նրան և իր ձվերը կայցնում վտաքի, կողքի և մեջքի մազերին: Չվերը կարելի չէ տեսնել հապարակ աչքով, և դրանց հաճախ անվանում են անիծ: Եզը կարող է մի սեղոնում մինչև 700 ձու դնել: Դրանցից 10-14 ուրում հանունանում է թրթուր-վորդը:

Չին, ստամոքսով քորելով իր կաշին, բերանն է գցում ձվերը: Դրանցից դուրս են գալիս թրթուրներ: Այս թրթուրներն անցնում են ըստամոքսը, վորտեղ և ապրում են տարվա մեծ մասը: Հետևյալ գարնան և ամռան սկզբին թրթուրը ստամոքսից անցնում է դեպի աղիքները՝ ուղիղ աղիքը: Այստեղից նա կղկղանքների հետ դուրս է բնկնում: Թրթուրն առաջին շրջանում՝ 1 միլիմետր յերկարությամբ՝ ունի 13 ողակ, ծածկված սուր սուր փշերով ու կարթանման մազմզուկներով, վորոնց ոգնությամբ նա կաչում է ստամոքսի ձախ պատին, ծակում է նրա լորձային թաղանթը և առաջ բերում մինչև 3 միլիմետր խորության և 4 միլիմետր լայնության վերքեր:

Չիու ստամոքսում թրթուրն իր զարգացման առաջին շրջանից անցնում է յերկրորդը, (տես նկ. 4. ստամոքսի պատը յերկրորդ շրջ-

ջանի թրթուրներով) ապա յերրորդը և վերջին շրջանը: Այս շրջանումն էլ ահա նա դուրս է գալիս ձիու աղիքից: Յերբեմն թրթուրները շատ-շատ են լինում: Նրանք ծածկում են ստամոքսի ամբողջ մասերը: Նրանց թիվը հասնում է հազարի և դեռ ավելի: Ստամոքսի մեջ թրթուրները սնվում են այն վերքերի թարախից, փոք հասցրել են հենց իրենք ստամոքսի լորձային թաղանթին: Չիու ստամոքսում և նրա հյուսվածքի հաշվին նա իր համար ճարպ է




Նկ. 3. Չիուի եզը

կուտակում: Այս ճարպով նա հասունացած ժամանակ ապրում է որդանիզմից դուրս: Հասուն թրթուրները թույլ կերպով են նստած ստամոքսի պատերին և աստիճանաբար դուրս են բնկնում սննդանյութերի հետ: Նրանք անցնում են աղիքով, յերբեմն կաչելով նրանց ժամանակավորապես: Այնուհետև կրկին պոկ են գալիս և դուրս թափվում: Թրթուրների դուրս գալը կատարվում է ապրիլին և ամբողջ ամառը: Նոր միջավայր բնկնելով, թրթուրները հարսնյականում են: Հարսնյակներից թևավորվելը կատարվում է 20-40 օրում: Բոռը լի-

նում ե թե՛ մատաղ և թե՛ պառավ՝ ձիերի մոտ:

Թրթուրները մեծ քանակությամբ լինելով ստամոքսի մեջ չափազանց վնասում են ձիերին: Նրանք առաջացնում են ախորժակի խանգարում, ձիերը մերթ քիչ են ուտում, մերթ շատ, լղարում են, մազը գզգզվում է, հաճախ պառկում են ձախ կողմի վրա, յերբեմն հազում են:



Նկ. 4. Զիւ ստամոքսի պատերը, վորոնց վրա յերկում են գիտաբարբուրները.

Թրթուրներն ուտում են ստամոքսի պատերը, գոյացնում են փոքրիկ վերքեր, ուր ընկնում են միկրոբները: Այդ միկրոբներն ընկնելով ձիու արյան մեջ, առաջ են բերում ծանր վարակիչ հիվանդություններ և մահացնում նրանց: Թըր-

թուրները, վիրավորելով ձիու ստամոքսի լորձաթաղանթը, նպաստում են ստամոքսի թափախային խոցերի առաջացմանը: Յերկար մընալով ձիու ստամոքսում և աղիքներում, թըրթուրները հյուծում են նրան, առաջ բերում ստամոքսի և աղիքների քրոնիկական բորբոքում:

#### ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԲՈՌԸ

Մեր Միության վոչխարաբուծության խոչորագույն պատուհասներից է վոչխարի բորը: Մի քանի վայրերում վոչխարների կեսը վարակված է բոռի թրթուրներով: Շատերը հիվանդ են լինում ամբողջ ամառը: Մյուսները մահանում են:

Հասուն վոչխարի բորը կովի բոռից մի քիչ փոքր ճանճ է՝ մոտ մի սանտիմետր յերկարությամբ: Ծածկված է կարճ, սև ու փայլուն մազերով, կարծես մերկ լինի: Բոռի գլուխը փոքր ինչ լայն է իրանից: Վորձը փոքր է եզից: Հասուն վիճակում բոռերն ապրում են առանց սնվելու (նրանք նույնիսկ բերան չունեն): Իրանը վերևից չազանակա-մոխրագույն է, սև կաթնագույն յերկարավուն մուգ գծերով: Ամբողջ միջին մասը խճողված է սև բծերով: Փորը հինգ ողակից է բաղկացած, բավական մեծ է, թևերը թափանցիկ են և վերևից չեն ծածկում փորը: Նա բաց է մնում, վորովհետև թևերը պինդ կպած են մարմնի կողերին, փորի յերկարությամբ: Փորի մեջ

զանվում է մի մեծ, անկանոն ձևի ձվաբան,  
վոր ւղված է ձվերով և կենդանի թրթուրներով:

Անձրեակին, սառը և քամի յեղանակներին  
բոռերը չեն թռչում: Նրանք մեծ թվով հա-  
վաքվում են Ժայռերի արանքները, փոսերում,  
մարազների պատերին և այլն և անշարժ  
մնում: Այնտեղ-կարելի չե նրանց լավ վոչըն-  
չացնել: Հասուն բոռերը զուգավորվում են,  
վորից հետո եզերը դնում են իրենց ձագերը,  
Հասուն բոռի կյանքը տևում է 25-30 օր:

Վոչխարի բոռի թրթուրը զարգացման



նկ. 5. Վոչխարաբոռի բոռուրը 8-րդ ստադիայում

յերեք չրջան է անցնում և ապրում է վոչխարի  
մարմնի մեջ 9-10 ամիս: Եզ բոռը թրթուրները  
նետում է վոչխարի քթածակերը, աչքերի  
լորձաթաղանթը կամ վոչխարի բերանը (յեր-  
բեմն պատահում է ուրիշ կենդանիների և  
նույնիսկ մարդու հետ):


Թրթուրն իր զարգացման առաջին չրջա-  
նում հետևյալ կազմությունն ունի: Նա շատ  
լավ նկատելի չե հասարակ աչքով. սպիտակա-

վուն է: Նրա մարմինը յերկարավուն է, ձվաձև  
առջևից լայն է, յետևից՝ նեղ: Կազմված է  
տասնեմեկ անդամից, վորոնք ունեն ողակաձև  
գոտիկներ սուր փշերով: Թրթուրը բերնի  
անցքի վերին մասում ունի յերկու զորեղ, կար-  
ծըր, սուր մուգ գույնի կեռեր: Այսպես լավ գին  
ված, չափազանց մանրիկ թրթուրներից եզը  
նետում է մի ամբողջ խումբ վոչխարի պնչին  
առանց նստելու, ուղղակի թռչելու միջոցին:

Թրթուրներն ընկնելով վոչխարի քթի խո-  
ռոչները, սկսում են ավելի խոր դնալ, իրենց  
փշերով և կեռերով ներս սողսովելով քթի լոր-  
ձաթաղանթի մեջ: Նրանք ճանկելով խոռոչը,  
ըոր և ցավ են առաջացնում: Վոչխարը քիթը  
տրորում է, գլուխը դես ու դեն դցում, բայց  
վոչինչ չի ոգնում: Յեթե եզը մեծ քանակու-  
թյամբ թրթուր է նետել, ապա վոչխարի քիթը  
արնակարվում է: Տաք օրերին, յերբ բոռի  
յերամները յերևան են գալիս հոտերի մոտ  
վոչխարներն իսկույն իրար գլխի յեն հավաք-  
վում: Նրանք կանգնում են անշարժ՝ գլուխը  
դետնին պահած: Այդ մասամբ փրկում է բո-  
ռից: Թրթուրները, ընկնելով քթի խոռոչը,  
չարժվում են դեպի վեր ճակատի և կզակի  
խոռոչները, պոչերի անցքերը: Այնտեղ նրանք  
իրենց զարգացման առաջին չրջանից անցում  
են յերկրորդը և հանգիստ ապրում ամբողջ  
աշունն ու ձմեռը: Այդ չրջանում նրանք քիչ  
են անհանգստացնում վոչխարներին, վորով-  
հետև թույլ են սպառազինված: Նոանց քանա-  
կը տարբեր է լինում:

Այսպէս, որինակ, Սալսկի գորակայանում կարակուլի մի վոչխարի գանգի գանազան խոռոչներում գտան 22 թրթուր: Չնայած գանգի տուփը բաժանված է ճակատի խոռոչից միջնորմով, բայց և այնպէս թրթուրները ծակ-ծրկել եյին միջնորմը: Դրանցից յերկուսը գտնվում եյին ուղիղ թաղանթի մոտ:

Գարնանն ու ամռան սկզբին թրթուրները գտնվում են դարգացման յերրորդ շրջանում:



Նկ. 6. Վոչխարի բացված գանգը զարգացման 3-րդ ստադիայի բրբուրներով

Նրանք աստիճանաբար թողնում են վոչխարի գանգը, դուրս են գալիս պնչերից և ընկնում գետին:

Վոչխարները թրթուրների յերրորդ շրջանը կրում են չափազանց հիվանդագին կեր-

պով. անընդհատ փուչտում են: Քից խիտ հոսում է սկզբում հեղուկանման, ապա թարխային մածուցիկ նյութ: Պնչի շուրջը գոյանում են կլեպներ: Քի լորձաթաղանթը բորբոքվում է: Վոչխարները շնչասպառ են լինում, գլխապտույտ շարժումներ են անում, գլուխը վեր ու վար են անում, յերբեմն ջղա-



Նկ. 7. Յերիւ կարակուլի վոչխար, բոսի բրբուրներից նվազած

ձգություններով ընկնում են գետին: Առաջ է գալիս կեղծ գլխապտույտ: Հովիվները շատ անգամ շփոթում են իսկական գլխապտույտի հետ և ասում են՝ «դեժ-ոեյե»: Հիվանդ վոչխարները նիհարում են, հոտից հետ մնում, յերբեմն մահանում:

#### ԳՈՐԵՆ ԿԱՄ ԲՈՌԵՆ

Դա մի մեծ միջատ է, բոռից յերկու անգամ մեծ, սև, խոշոր գլխով: Մորեխի թրթուրները կենդանու որդանիզմի մեջ չեն ապրում: Հաճախ գորեխները նստում են ձիու և այլ

կենդանիների փորին, կողերին, ծծում են արյունը և թռչում: Հաճախ նրանց շփոթում են բուռի հետ: Եստերը կարծում են, թե գո-



Նկ. 8 Գարիփ

րեխն ու բուռը միևնույն բանն են: Գործելը խիստ տարբերվում է բուռից, և դրանք իրար հետ շփոթել վոչ մի կերպ չի կարելի:

**ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ԲՈՌԻ ԴԵՄ**

Վերև ասածներից յերևում է, վոր բուռը ամենից շատ վնաս հասցնում է խոշոր յեղջյուրավոր անասուններին և յեղջերուներին: Դրա համար ել գլխավորապես պետք է պայքարել խոշոր յեղջյուրավոր անասունների և յեղջերուների պարազիտների դեմ: Իհարկե, չպետք է մոռանալ նաև ձիերին ու վոչխարներին: Բուռը նրանց ել չի խնայում, բայց նրանց ավելի քիչ վնաս է պատճառում:

Կարելի յե՞ անհատապես կուվել բուռի դեմ:

Բուռի վերևի նկարագրությունից յերևում է, վոր թրթուրը պետք է իբ դարդացման բուրբ շրջաններն անցկացնի կովի որդանիգմում: Միայն այդ դեպքում կարող է գոյանալ կովի վրա ձու դնող հասուն ճանճ-բուռ: Այստեղից հետևում է, վոր թրթուրը պետք է վոչնչացնել նրա դարդացման առաջին կամ հետագա շրջաններում: Այն ժամանակ բուռը չի կարող առաջ գալ, զարգանալ: Նրա ցեղը կվոչնչանա:

Այս չարիքից ազատվելու համար անհրաժեշտ է դործել կազմակերպված ձևով:

Խորհանտեսությունների և կուլանտեսությունների համար ավելի հեշտ է կուվել բուռի դեմ, քան մենատեսաներին:

Այստեղ անհրաժեշտ է ընդհանուր միջոցներ ձեռք առնել բոլոր անասունների համար: Այս բանը պետք է նկատի առնեն նաև մենատրնատեսները և ամբողջ գյուղով, վողջ հասարակությամբ պայքար մղեն բուռի դեմ:

Յեթե միայն մեկ-յերկու անհատական տնտեսություններ վոչնչացնեն թրթուրներին իրենց կովերից, իսկ մյուսները չուզենան, դրանից առանձին ոգուտ չի ստացվի և վոչ-վոք չի փրկվի բուռերից:

Հարևան կովի թրթուրներից յելած բուռերը կարող են ձու դնել նախրի բուլոր կովերի վրա:

Յեթե մի գյուղում վոչնչացնեն բուռերին,

ապա հարեան գյուղերից բոռերի թռչելը գըծ-  
վար է: Բոռերը հեռավոր տարածություն  
չեն թռչում:

Յեթե բոռի դեմ պայքար մղվի ամբողջ  
շրջանում, ապա յերկու-յերեք տարվա կանո-  
նավոր աշխատանքից հետո կովերն իսպառ  
կազատվեն բոռերից:

### ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՊԱՅՔԱՐԸ

Մեր խորհրդատեսություններում և կոլտն-  
տեսություններում պետք է կազմակերպել բոռի  
դեմ պայքարն ուսումնասիրող խմբակներ:  
Յեթե այդ խմբակները գործունյա լինեն,  
կարող են բրոշյուրներից ու թերթիկներից  
ոգտվելով բոլոր կոլտնտեսականներին մաս-  
նակից դարձնել այդ գործին: Այդ լավ նախա-  
ձեռնություն է: Այդ գործում գլխավոր դեր  
կատարելու յեն կանայք: Սորհրդային իշխա-  
նությունն ամեն իրավունք տվել է կանանց  
թե՛ կոլտնտեսուհիները և թե՛ մենասնտեսու-  
հիներն ամենից չափ են տեսնում կովերի այն  
տառապանքները, վոր նրանց պատճառում են  
բոռերը: Նրանք տեսնում են, թե ինչպես կովե-  
րը հյուսվում են, պահասեցնում են կաթը,  
հիվանդանում են բոռերից: Նրանք տեսնում են  
իրենց կրած վնասները:

Դրա համար, կանայք, աշխատեցեք պատ-  
գամավորական ժողովներում անպայման ընդ-

հանուր վորոշում կայացնել կովերը բոռերից  
փրկելու մասին:

Գյուղի մյուս կազմակերպությունները՝  
կոմյերիտական բջիջը, Պաշը- ավիաքիմի բջի-  
ջը, դպրոցը, պիտներական խմբակները կա-  
ջակցեն բոռի դեմ մղվող պայքարին:

Բոռի դեմ պայքարի ուղին բարդ է և մեծ  
ջանք է պահանջում: Բայց ուրիշ յեղք չկա:

### ԿՈՎԻ ԲՈՌԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ


Բոռի դեմ կարելի յե կովել յերկու կերպ:  
Առաջինը՝ կանխել վարակումը, յերկրորդ  
վոչնչացնել բոռի թրթուրը նրա զարգացման  
վերջին աստիճանում:

Կանխել-նշանակում է ակտիվ կերպով մի-  
ջամատել պարագիտի կյանքին: Այս ամեն մի  
բժշկության հիմքն է կազմում: Ներկա դեպ-  
քում պետք է այնպես աշխատել, վոր խանդար-  
վի բոռի թրթուրի զարգացումը և նա չկարո-  
ղանա ընկնել մարմնի մեջ:

Դրա համար դիմում են հետևյալ միջոց-  
ներին:

Կովերին 3-4 որը մեկ անգամ լողացնում  
են բոռի ամբողջ թռիչքի միջոցին, կամ 3-4  
որը մեկ անգամ խոզանակով և ջրով լվանում  
են կովի վոտները, կողերը, փոքր, ազդրերը:  
Կովի մազերի վրա ածած ձվերը ջուրը մաք-  
րում, թափում է և չի թողնում թրթուրներին  
զարգանալու և կաշու տակն անցնելու:

Գովերին լվանում են նաև խոզանակով, ջրով և կանաչ սապոնով: Կանաչ սապոնը լուծում է բոռի ձվի կեղևը: Նա չափազանց բարեբար ներդրածություն է ունենում, յեթե սապոնն կենդանու մարմնի այն մասերը, վորտեղ եզր ձու յե դրել մազերին: Կանաչ սապոնը լուծելով կեղևի, վոչնչացնում է այն թրթուրները, վորոնք դեռ չեն կարողացել կովի կաշվի տակ անցնել:




Նկ. 9. Կովի լողացնելը

Վերցնում են կանաչ սապոնը և խոզանակի ու ջրի միջոցով սապնում են կովի մազերը, առանձնապես յետևի և առաջի վորտները, վորտեղ սովորաբար բոռը ձու յե դնում, ապա ազդերը, վորն ու կողերը: Հետո սապոնը մաքրում են ջրով և կենդանուն բաց թողնում:

Այս գործողությունը պետք է կրկնել

չորս-հինգ օրը մեկ անգամ քանի դեռ բոռերը չարունակում են թուչել:

Բժշկել-նշանակում է վոչնչացնել թրթուրներին ճեղքվածքներում, ուռուցքներում, նրանց զարգացման չորբորդ և հինգերորդ շրջաններում: Բոռի թրթուրները հեռացնելուց ու վոչնչացնելուց հետո անասունը կազդուր-



Նկ. 10. Կովի լվանալը խոզանակով, գործածում են մախար չոր յիվ կանաչ ոմառ.

վում է և ավելացնում է կաթը: Բացի սրանից, թրթուրներից այլևս ճանձ-բոռեր չեն առաջանում և ուրեմն չեն վարակում կովերին:

Նախքան վորևե բժշկության անցնելը, անհրաժեշտ է համապատասխան ձևով նախապատրաստել կենդանուն, այսինքն՝ դառնել բո-

լոր ուռեցքները, իրենց չրջակա մազերը խուզել և ածիլել: Յեթե ուռեցքը թարախակալած է, պետք է թարախը հանել սեղմելով:

Թրթուրների մեքենական հեռացումը պետք է կատարել միաժամանակ ամբողջ նախիրում:

Ուռուցքը սղմում են յերկու ձեռքերի բութ մատով, ցուցամատով, կամ միջին մատով: Նախ միջին մատով սեղմում են ուռուցքի շուրջը, ապա հետզհետե մատները մոտեցնում են ուռեցքի բերնին, ինչպես մասսաժանելիս: Պետք է աշխատել, վոր անցքի թրթուրը դուրս գա անմիջապես և վոչ ճխրված:

Այս յեղանակը՝ մատներով դուրս ճզմելը յերբեմն ավելի պակաս ոգտակար է լինում: Ուռուցքի շուրջը պատած թույլ ու նուրբ կաշին մատներով սղմելիս ծալծվում է, իսկ թրթուրը սահում անցնում է կաշու տակի հյուսվածքը:

Այս բանը նկատի առնելով, պետք է աշխատել մատներով և բռնիչով (պինցետով), այսինքն՝ նախ մատներով սեղմել ուռուցքի բոլորքը, յերբ ուռուցքի թափանցիկ մասում յերևա թրթուրը, բռնել պինցետի ծայրով և հեռացնել:

Դրանից հետո հանվում է ամբողջ թարախը: Ուռուցքին քսում են յող: Յերկու-յերեք օրից հետո ուռուցքը բոլորովին առողջանում է,

առանց վորևե բարդության: Այս յեղանակը լավ է նրանով, վոր թրթուրի հեռացումը կարելի յե կատարել նրա զարգացման սկզբնական շրջանում թույլ չտալով ուռեցքին մեծանալու և թարախակալելու: Սակայն պատահում է այն պես, վոր շատ դժվար է լինում թրթուրը հանել դեռ չհասունացած ուռուցքի նեղ անցքից: Այդպիսի դեպքում կտրում են ուռիցքը, լայնաց-



Նկ. 11. Կովի բժշկումը ուռուցքներից

նում են նրա կտրվածքը և թրթուրն ազատ կերպով հեռացնում: Ուռիցքը կտրելու իրավունք ունի միայն անասնաբուժական աշխատակիցը: Այս ձևի աշխատանքների միջոցին անասուններին պետք է քննել ժամանակ առ ժամանակ, թեկուզ շարաթր մի անգամ, վորպեսզի թրթուրները հեռացվեն բոլոր բաց ուռիցքներից:

Լամ և ներգործում ծխախոտի փոշու կրա-  
խառն եքստրակտը (մզվածքը)։ Դրա համար  
վերցնում են մի լիտր ջուր, մեջը լուծում են  
100 գր. չհանգած կիր, հետո ավելացնում են  
440 գրամ ծխախոտի փոշի։ Դրանք խառնում  
են և թողնում մի ամբողջ օր, վոր հոտի։ Այ-  
նուհետև խառնուրդն անց են կացնում մարլով  
կամ քաթանի կտորով։ Խառնուրդը սրսկում են



Նկ 12. Բռնիչ-պինցետ՝ քրոնը հետցնելու համար.

Թրթուրակալած բոլոր ուռեցքների մեջ չարի-  
ցով, յեղզանով կամ փոքրիկ սրսկիչով (սպրին-  
ցովիկա)։ Սրսկիչի ծայրը պետք է շատ նեղ լինի,  
վորպեսզի մանի ուռիցքի բերանը։ Սրսկել այն-  
քան, վորքան կարող է տանել ուռիցքը։ Մի  
օրից հետո նույն բանը կրկինել։ Յեթե հարկա-  
վոր լինի, պետք է նաև յերրորդ անգամ կատա-  
րել։ Յերեք անգամից հետո թրթուրները  
100 տոկոսով վոջնչանում են։

Թե որդանիզմի և թե կաշվի համար դեղը  
անմնաս է։ Ուռիցքները հետո առողջանում են,  
առանց թարախակալելու։ Մխախոտի փոշի կա-  
րելի յե ձեռք բերել ամեն գործարանում կամ  
ամբողջական թուփունը փոշի դարձնելով։

Թրթուրները վոջնչացնելու համար շատ

լավ միջոց է դաղուլինը։ Նա պատրաստված է  
այսպես. պետք է վերցնել 50 գրամ նավթ (սպի-  
տակ) և 50 գրամ բենզին և խառնել իրար։ Գոր-  
ծածել ճիշտ այնպես, ինչպես ծխախոտի փոշու  
եքստրակտը։ Սրսկումը կատարել յերեք ան-  
գամ։

Բոռի թրթուրների վրա սպանիչ ներգոր-  
ծություն է ունենում չորսըլորային ամխածինը։  
Դա կարելի յե ձեռք բերել դեղատներում. գոր-  
ծածվում է ճիշտ այնպես, ինչպես ծխախոտի  
փոշու եքստրակտը, այսինքն՝ յեղզանով, սըրս-  
կիչով կամ առանց ասեղի չարիցցով։ Մայրը  
մտցնում են ուռիցքի անցքը և սրսկում։ Այս  
գործը պետք է յերեք անգամ կատարել միև-  
նույն ուռիցքի մեջ։ Ստակացրած թրթուրների  
կարելի յե չհեռացնել, վորովհետև ուռիցքի  
թափանալուն նրանք չեն խանգարում։

Բոռի դեմ պայքարելու լավ միջոց է նաև  
ծծմբածխածինը։ Դա շատ հեշտ կարելի յե  
ձարել ՌՖՎ-ի հենակետներում. սակայն, պետք  
է նկատի ունենալ, վոր ծծմբածխածինը խիստ  
թունավոր դեղ է։ Ծծմբածխածնի գոլորչին  
վնասակար ազդեցություն է ունենում աչխա-  
տողների առողջության վրա և չարիցցով, սըրս-  
կիչով ու յեղզանով բազմաթիվ անասունների  
վրա աչխատողները պետք է անպայման ունե-  
նան դիմակներ։

Ծծմբածխածնի գործածման տեխնիկան  
նույնն է, ինչ չորսըլորային ամխածնինը։

Բոռի դեմ պայքարելու հետևյալ մեթոդը

ուռիցքների մեջ Ֆենուլի յուղ քսե՛լն է: Յենուլի յուղը պատրաստում են ճարպերից (լավագուշ- նը խոզի ճարպն է) 5 տոկոսային խտացրած Ֆենուլի մեջ: Քսուկ պատրաստելու համար վերցնում են կարրոլյան թթվուտի բյուրեղներ, խառնում են ճարպի հետ և սանդուղի հարում:

Քսուկը վերցնում են փոքրիկ թիակով, դնում են ուռիցքի բերնին մի սխեռի մեծու- թյամբ և վրան հարում: Բացի դրանից, ուռեց- քի բերնին թողնում են ելի մի քիչ, այն հաշ- վով, վոր ծծվի մեջը: Յերկու օրից հետո պետք է անասունին քննել: Յեթե գտնվեն կեն- դանի թրթուրներ, պետք է նորից քսել:

#### ՁԻՆՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ ԲՈՌՆՐԻՑ

Թրթուրների վարակումից ազատելու ամե- նալավագուշն միջոցն այն է, վոր ձիերը մա- քրվեն բոռերի թռչելու ամբողջ ժամանակամի- շոցում: 2-3 օրը մի անգամ ձիերին պետք է մաքրել խոզանակով, հեռացնելով մազերին կպած բոռի ձվերը: Այդ դեպքում առանձնա- պես ուշադրություն պետք է դարձնել վոտքե- րի վրա, ծնկների շուրջը, կողերին, ուսերին և այն բոլոր տեղերին վորտեղ բոռը ձու յե դնում:

Պարզ է, վոր այսպիսով ձիերն այլևս չեն վարակվի: Ստամոքսում ել չեն յերևա մեծ թրթուրները, հետևաբար և չեն լինի հասուն ճանճեր: Լավ է, յեթե ձիերին բժշկեն աշնանը կամ ձմրան սզկրին: Այդ ժամանակ ստամոքսից

հեռացնելով թրթուրներին, կարելի յե վստա՛ լինել, վոր այլևս թրթուրը չի ընկնի ստամոք- սը մինչև հետևյալ ամառը: Լավ միջոց է նաև կապուլներով ծծմբածխածինը: Ծծմբած- խածնից հետո տալ լուծողական: Այս բժշկու- թյունը չափազանց լուրջ և բարդ միջոց է: Այս միջոցը գյուղացիք իրենք չպետք է գործա- դրեն: Այդ նպատակով պետք է դիմել անաս- նաբուժին կամ անասնաբուժակին: Այնտեղ դեղ կտան և կբացատրեն, թե ինչպես գործա- ծել, վոր ձիերն ազատվեն անկոչ հյուրերից:

#### ՎՈՋԽԱՐՆԵՐԻ ԲԺՇԿՈՒՄԸ

Վոջխարի բոռն ապրում է վոջխարի գանգի խոռոչներում: Ուստի նրա դեմ պայքարելը չս- փաղանց դժվար է և պակաս արդյունավետ: Վորպեօզի բոռի եզերը ձու չդնեն վոջխարների պնչերին, վոջխարի դնչին ու շրթունքներին՝ կուպր են քսում: Կուպրի հոտը հեռու յե վա- նում բոռերին: Այս բանը կարելի յե կատարել նաև հասարակ ձևով: Արոտատեղերում դնում են գերաններ կամ հաստ տախտակներ: Նրանց մակերեսին 5-6 դյում իրարից հեռու անցքեր են փորում: Ամպուն այդ անցքերի պատերին յերբեմն աղ են ամում, նախորոք անցքերի յեղ- րերին քսելով հեղուկ կուպր: Վոջխարները չարչարվում են աղը լիզելու և ամբողջ դունչը կարոտում են: Կարելի յե վոջխարի բոռերի դեմ պայքարել նաև այլ յեղանակով: Հայտնի յե,


վոր վոչխարի բոռերը չեն թռչում անձրև, մառախլապատ և քամի յեղանակներին, ինչպես նաև առավոտներն ու յերեկոները: Նրանք իրենց համար գտնում են մի խաղաղ անկյուն՝ ձորերում, քարերի վրա, դատարկ մարագներում, ցանկապատերին և այլ տեղերում: Հավաքվում են ահագին կույտերով և անշարժ նրստում: Այնտեղ կարելի յե նրանց բռնել ձեռքերով: Ուսումնասիրելով նրանց մշտական տեղերը, կարելի յե մեծ քանակությամբ վոչնչացնել: Այս գործին կարող են աջակցել նաև պատանի-բնագետ աշակերտները: Քամի որերին արտատեղերում կարելի յե տախտակի վահաններ տնկել: Բոռերը նստում են արևի կամ քամու հակառակ կողմը: Այնտեղ նույնպես կարելի յե մեծ քանակությամբ վոչնչացնել:

### ԻՆՉՊԵՍ ՉՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ԲՈՌԻ ԴԵՄ

Վաղուց ժողովրդի մեջ տիրում է այն «հեքիմական» հավատալիքը, թե հարկավոր է հաճախ կուպր քսել կովի մեջքին ու կողերին: Այն ժամանակ բոռերը չեն մոտենա կենդանիներին և ձու չեն դնի: Կովերն այլևս խոցեր չեն ունենա: Դուք արդեն զիտեք, վոր բոռի եզր նստում և ձու յե դնում վոչ թե մեջքին և կողերին, այլ վոտներին, ազդրերին ու փորին: Այնպես վոր «հեքիմական» միջոցը բոլորովին չի ազատում վարակումից, և միայն փչացնում է կաշին: Բացի դրանից, առատ քսելուց

կովերը չեն կազդուրվում, իսկ մատղաշները լավ չեն մեծանում:

Գործ են ածում նաև պղնձի արջասպի հազեցած լուծույթ, սրսկելով ուռուցքների մեջ: Դրանից կաշին և նրա հյուսվածքը խիստ բորբոքվում են: Առաջ է գալիս մի մեծ թարխավերք: Յեվ հետևանքն այն է լինում,



Նկ. 13. Արջասպով բժշկելը.

վոր անասնաբուժը հարկ է զգում բժշկել անասուններին:

Պետք է հեռու մնալ և չոգտվել զանազան հեքիմական ու պառավական խորհուրդներից: Պետք է բժշկել այնպես, ինչպես թելադրում է զիտությունը, ինչպես ցույց են տալիս անասնաբուժական կայանում:

Խորհրդային իշխանությունն ու պրոֆ-  
միությունները մեր կուսակցութեան ղեկա-  
վարութեամբ մի շարք միջոցներ գործա-  
դրեցին բարձրացնելու հովիվների կուլտուրա-  
կան մակարդակը, լայնացնելու նրանց իրա-  
վունքը, վերացնելու անգրագիտությունը նը-  
րանց միջից: Ամեն ինչ արված է, վորպեսզի  
հովիվը, նախրապանը իրենց զգան քաղաքացի:  
Այս բանը գիտակցելով, ամեն մի հովիվ պար-  
տավոր է ինչքան հնարավոր է հոգ տանել ա-  
նասնի մասին:

1. Հովիվ, դու վոչ միայն պետք է հիշես  
այն, վոր անհրաժեշտ է ժամանակին ջուր,  
կեր տալ անասնին, այլև այն, վորը քեզ վստա-  
հած անասունը լինի կատարելապես առողջ:

2. Լավ հիշիր, վոր ամեն դարնան անա-  
սունը արոտ տանելիս հարկավոր է վոչնչացնել  
բոռի թրթուրներին:

3. Բոռի դեմ պայքար մղելու կարեվո-  
րությունը դու պետք է ընդունել տաս խորհ-  
տնատեսությունների, կուլտնատեսությունների և  
առհասարակ գյուղացիների ընդհանուր ժո-  
ղովներում:

4. Իմացիր, վոր վոչնչացնելով բոռերին  
դու դրանով ստեղծում ես քո գործի համար  
հանգիստ միջավայր: Կովերը չեն փախչի քե-  
զանից:

5. Առողջ կովը բարձրացնում է խորհտըն-

տեսությունների և կուլտնատեսությունների  
բարեկեցությունը:

ԲՈՒՆՐԻ ԴԵՄ ՊԱՅԳԱՐԻՐ ԿՈԼԵԿՏԻՎՈՐՆԵՆ

Վոչ մի բոռ չի կարող առաջանալ, յեթե  
նա իր ուղին չի անցել կենդանու մարմնի մեջ:  
Նշանակում է՝ յեթե չվոչնչացնենք թրթուրը  
վորևե կենդանու վրա, ապա նա կհանդիսանա  
բոռային աղետ տարածողը: Բոռերի դեմ պայ-  
քարը հաջող կլինի այն դեպքում, յերբ աշխա-  
տենք միահամուռ ուժերով:

Խոշոր կուլեկտիվ տնտեսությունների  
կամ խոշոր խորհտնատեսության մեջ, վորտեղ  
կան անասուններին հսկող հատուկ մարդիկ,  
հեշտ է իրացնել բոռի դեմ մղվող պայքարի  
բոլոր միջոցները:

Յեվ մենք կոչ ենք անում բոլոր կուլտնատե-  
սություններին, բոլոր խորհտնատեսություն-  
ներին, կազմակերպել բոռի դեմ պայքարելու  
գործը, վոչնչացնել բոռերին մեր գյուղատն-  
տեսության սոցիալիստական սեկտորում և  
դրանով որինակ դառնալ անհատական տնտե-  
սություններին:

Հ Ր Ա Ղ Ա Ն Գ

խոշոր յեղջյուրավոր անասնի կաշու բոռի դեմ պայքարելու վերաբերյալ

Կաշու բոռը՝ խոշոր յեղջյուրավոր անասնի խկակիան պարագիտն է: Բոռի եզր մոտ 500 ձույն դնում, գլխավորապես անասնի վոտների, պճեղի մոտ կամ ծնկան շուրջը: Զվից յեկած թրթուրները խցկվում են կաշվի մեջ, անցնում են վորկորի պատերը, հետո միացնող հյուսվածքներով մտնում են կաշվի տակ և առաջ բերում մաշկի միացնող հյուսվածքների բորբոքում՝ ուռուցքներով և ցավերով:

Մեջքի վրա առաջ է գալիս ուռեցք: Մի առժամանակից հետո ուռուցքի մաշկը բացվում է, անցք է գոյանում, վորից հասունացած թրթուրի ընկնելուց հետագայում դուրս է թռչում հասուն բոռը: Թրթուրի ընկնելուց հետո կաշվի վրա մնում է վնասված տեղը պնդացած կամ ճեղքված:

ԲՈՌԸ ԽԻՍՏ ԻԶԵՑՆՈՒՄ Ե ԿԱՇՈՒ ՎՈՐԱԿԸ ՊԱԿԱՍԵՑՆՈՒՄ ԿԱԹԸ ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ Ե ՄՍԱՑՈՒ ԱՆԱՍՆԻ ՎՐԱ

ԿԱՇՈՒ ԲՈՌԻ ԴԵՄ ՊԱՅԿԱՐԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1. Կաշու բոռի դեմ պայքարելու ամենալավ միջոցն է՝ վոչնչացնել արդեն իստունացած թրթուրներն անասնի որգանիզմի մեջ

գարնանամտին դաշտ հշելուց առաջ կամ սկզբին:

2. Բոռի դեմ պայքարելու ժամկետները և՛ Ս.Ղ.Մ. տարբեր շրջաններում տարբեր են: Միջին Ասիայում և Անդրկովկասում թրթուրների վոչնչացումը կատարվում է ապրիլի վերջից մինչև հունիսի վերջը: Միության միջին գոտում՝ ապրիլի սկզբին, հունիսին: Հյուսիսային շրջաններում՝ ապրիլի վերջին, հուլիսի սկզբին:

3. Թրթուրների վոչնչացումը հետապըն դում է յերկու նպատակ. նախ՝ բոռի թրթուրի հեռացումից կամ մահանալուց հետո խիստ վարակված և նվազած կենդանին արագ կազդուրվում է, ավելանում է քաշով, շատացնում կաթը. յերկրորդ՝ ինչպես արդեն ասացինք, վոչնչացրած թրթուրներից չեն կարող դուրսնալ հասուն ճանճեր և այլևս չեն վարակի անասուններին: Հետևաբար, հասուն թրթուրների դեմ պայքարելը վոչ միայն բուժիչ միջոց է, այլև կանխում է (պրաֆիլակտիկա) անասունների հետագա վարակումը:

4. Կաշու բոռի թրթուրների վոչնչացման լավագույն միջոցներն են. ա. ) սրկիյ նեղվածմերի մեջ չորսփյրային ածխածին կամ ծծմբածխածին. բ) ֆսլ նեղֆավածմերին ֆենոլի յուղ և յոդաֆորմ. գ) ձեռնով դուրս ֆաշել և վոչնչացնել:

Հիշած միջոցներից ամեն մեկի կանոնավոր

կիրառումով կարելի յե բոլի թրթուրները 100<sup>0</sup>/0-ով վոչնչացնել:

5. Պայքարի բոլոր այս յեղանակների դործադրման զեպքում պետք է նախապատրաստել կենդանուն համապատասխան ձևով, այսինքն՝ գտնել բոլոր անցքերը և նրանց շուրջը խուզել մազերը, խոցից հանել թարախը յեթե այդպիսին շատ-շատ է:

6. Թրթուրները վոչնչացնելս, յեթե վոր ևե բարդություն առաջանա (ուռուցք, թարախակալում) պետք է դիմել տնտեսության անասնաբուժին կամ մոտակա անասնաբուժական կայան:

### ՉՈՐՄՔԼՈՐԱՅԻՆ ԱԾԽԱԾԻՆ ԿԱՄ ԾԾՄԲԱԾ- ԽԱԾԻՆ ՍՐՍԿԵԼԸ

7. Թրթրակալած խոցի մեջ չորսըլորային անխածին կամ ծծմբաանխածին սրսկելը կատարում են սրսկիչով (չպրից) կամ փոքրիկ յեղդանով:

8. Սրսկիչի կամ յեղդանի ծայրը մոտեցվում է խոցի բերնին, մեջն է անվում 0,5-1,5 ջր. սմ. նյութ, նայած խոցի մեծության:

9. Սովորաբար, յեթե խոցերը նախորոք լավ մշակված են, սրսկումը կատարվում է շատ արագ առանց դանդաղելու: Մի որից հետո անհրաժեշտ է սրսկումը կրկնել, փորովհետև մի անգամով շատ դժվար է բոլոր թրթուրները մինչև վերջինը վոչնչացնել: Իհարկե, կրկնա-

կի պետք է աշխատել այն թրթուրների վրա, փորոնք դեռ կենդանի յեն մնացել:

10. Չորսըլորային անխածինը կամ ծծմբաանխածինն իբրև դոլորչացող նյութեր, պետք է պահել փոքր ապակե կամ յերկաթե տուփերում՝ լավ հարմարեցրած խցանով կամ խուփով:

11. Ծծմբաանխածինն իբրև թունավոր նյութ, դործածելիս անհրաժեշտ է ոգտվել հակազաղային դիմակով:

Ծխել ծծմբաանխածինի մոտ, իբրև դյուրավառ նյութի, չի կարելի: Ծծմբաանխածին կարելի յե դործածել միայն քիչ խոցեր լինելու զեպքում (վոչ ավել, քան 5):

### ՖԵՆՈԼԻ ՔՍՈՒԿ ԿԱՄ ՅՈՂԱՓՈՐՄ ՔՍԵԼԸ

12. Ֆենոլի քսուկը պատրաստվում է վաղորոք: Վերցնում են մաքուր ֆենոլի կամ բյուրեղացած կարբոլի թթվուտի մի մասը և վորեկ յուղի կամ վազելինի 9 մասը: Շաղախումը կատարվում է տաքացնելով:

Յողաֆորմի քսուկը պատրաստվում է այսպես. վերցնում են մի մասը յողաֆորմ և չորս մասը՝ վազելին:

13. Մի կտոր քսուկ (սիսեոի մեծությամբ) և մոտ 1 զրամ ծանրությամբ դրվում է խոցի բերանին, ապա մետաղե կամ փայտե թիակով ներս է տարվում: Քսելուց հետո բեր-

նին թողնվում է մի փոքր կտոր քսուկ, վորպեսզի հետզհետե ծծվի ճեղքվածքի մեջ:

Յեթե թրթուրների մի մասը դեռ կենդանի չե մնացել, յերկու որից հետո նորից պետք է կրկնել քսումը: Յողաֆորմի քսուկը կարելի չե գործածել միայն վոչ մասացու անասունների վրա:

14. Քանի վոր քսուկի բաղկացուցիչ տարրերը խիստ գորշիացող են, քսուկները պետք է պահել լավ փակվող լայնարերան ապակե կամ թիթեղե անոթներում, վորոնց կախարիչները պետք է լավ հպվեն և միևնույն ժամանակ հեշտ բացվեն:

### ԹՐԹՈՒՐՆԵՐԸ ՁԵՌՔՈՎ ԴՈՒՐՍ ՎԱՆԵԼՆ ՈՒ ՎՈՉՆՉԱՑՆԵԼԸ

15. Ձեռքով ճզմելը թեև կաշու բոսի թրթուրները վոչնչացնելու հասարակ և մատչելի յեղանակն է, բայց այնքան աշխատանք պահանջող, վոր կարելի չե հանձնարարել միայն այն դեպքում, յերբ տնտեսությունը հիշած քիմիական նյութերից և վոչ մեկը չունի իր ձեռքի տակ:

16. Ձեռքով դուրս վանելը պետք է կատարել այն ժամանակ, յերբ խոցերն արդեն բավական լայն անցք ունեն: Վորովհետև ուռուցքները հասունանում են վոչ միաժամանակ, սպա այդ պետք է կատարել առաջին խոցը բացվելուց մինչև վերջին թրթուրը պարբերաբար,

ուռուցքների առաջանալու հետ զուգընթաց: Դրա համար անհրաժեշտ է պարբերաբար նայել անասնին, վոչ պակաս քան հինգ որը մի անգամ, ալելի համար է կեսօրվա կթից հետո, յերբ անասունն ախոռումն է: Նայելիս բոլոր այն խոցերը, վորոնք լայն անցք ունեն (անցքից պետք է յերևան թրթուրի շնչանցքերը յերկուսե բծերով), անհրաժեշտ է համապատասխան ձևով մշակել, այսինքն՝ հեռացնել թարախը, մաքրել անցքը և այնուհետև միայն հեռացնել թրթուրները:

17. Թրթուրը դուրս հանելու համար բուխ և ցուցամատով բռնում են ուռուցքը և աստիճանաբար, կարծես մասաժ անելով, մատները մոտեցնում են անցքին և այս շարժումով թրթուրը հանում դուրս: Բռնում են մատներով կամ կեռ պինդետով և ճխում կամ հավաքում ֆորմալին կամ մաքուր նավթ լցրած չշերը:

18. Թրթուրը հեռացնելուց հետո հեռացվում է խոցի մեջ մնացած թարախը, իսկ անցքին քսում են յող կամ մի ուրիշ հականեխիչ նյութ:

19. Ձեռքով դուրս վանումը պետք է կատարել շատ զգուշ, վորպեսզի թրթուրը չճխրվի խոցի մեջ: Համարյա բոլոր այն դեպքերում, յերբ անփութ զործ կատարելու շնորհիվ թրթուրները ճխվում են խոցի մեջ, դրանց ակզրն առաջ են դալիս մեծ, ուշ բուժվող թարախակալած ուռուցքները, վորոնք խիստ քայքայում են անասուններին:

ՊԱՅԻՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՇՈՒ  
ԲՈՌԻ ԴԵՄ

20. Գյուղատնտեսութեան սոցիալիստական սեկտորում բոռի դեմ պայքար մղելու բոլոր միջոցառումներն իրացնում են բրիգադը՝ կազմված մի բրիգադիրից, վորին յենթարկվում են մեկ կամ մի քանի խումբ, նայած խունամելի տնտեսութեանների և անասունների քանակին:

Ամեն մի խումբ իր հերթին բաղկացած է մի ավագ բանվորից և 1-3 ոժանդակ բանվորներից:

21. Բրիգադիրը հանդիսանում է անասնապահութեան վնասատուների (արտաքին պարազիտների) դեմ պայքար մղող հատուկ պատրաստութեան ունեցող սանիտար-բրիգադիրը:

22. Բրիգադիրը. - միանձնյա ղեկավարման կարգով պատասխանատու յե բրիգադայի աշխատանքի համար: Նա կատարում է անասունների սկզբնական հետազոտումը՝ վարակվածութեանը պարզելու համար, կազմում է պայքարի միջոցառումների պլան, համաձայնեցնում այն տնտեսութեան վարչութեան հետ, հոգ է տանում թույնների հայթայթման և բրիգադները բանուժով ապահովելու մասին, խմբերին առաջադրութեաններ, հրահանգներ և տալիս, վերահսկում է նրանց աշխատանքն և կազմում է տեղեկագրեր կատարած աշխատանքի մասին:

23. Ավագ բանվորը. - նախրասլանն է, ախոռապանը կամ հովիվը, վոր բրիգադիրի դեկավարութեամբ գրույցների և գործնական աշխատանքների միջոցով անցնում է կաշու բորի դեմ պայքարելու բոլոր յեղանակները:

24. Ավագ բանվորն է անմիջորեն կատարում թրթուրների վոչնչացումը: Նա յե նայում անասուններին, նախապատրաստում խոցերը մշակման համար, նա յե կատարում սրսկումը, շփումը կամ ձեռքով վանումը և բոռի թրթուրների վոչնչացումը:

25. Ոժանդակ բանվորները. - հատուկ պատրաստութեան չեն պահանջում: Նրանց պարտականութեանն է միայն անասունները քշել փարախը, պահպանել այնտեղ կամ գոմում:

26. Բոլոր դեպքերում ընդանուր հսկողութեանը ձեռք առած միջոցառումների նկատմամբ իրադործում է տնտեսութեան ավագ անասնաբուժ կամ շրջանային անասնաբուժական տեսուչը:

27. կաշու բոռի թրթուրների վոչնչացման աշխատանքների պրոցեսը բաղկացած է հետևյալ մոմենտներից. ա) անասունների սկզբնական հետազոտումը՝ վարակվածութեանը պարզելու համար, բ) աշխատանքի նախապատրաստութեանը, գ) թրթուրների վոչնչացումը, դ) աշխատանքի հաշվառքը:

28. Անասունների նախնական հետազոտումը

մը, վարակվածությունը պարզելու համար, կատարում է բրիզադիրը: Դրա համար նա աշխատանքից առաջ շրջում է իր սպասարկելի տերիտորիայի բոլոր տնտեսություններն ու անասնախմբերն և հաշվի յե առնում ամեն մի անասնախմբի վարակվածության տոկոսն ու չտիր: Այդ նպատակով նա մեկ առ մեկ նայում է տարբեր հասակի, տեսակի և ցեղի վոչ պակաս, քան 50 անասուն:

29. Թրթրակալած խոցերն ամենից առաջ պատահում են անասնի մեջքին, ավելի քիչ՝ վզին, կողերին և գավակին: Թեև պայքարի մոմենտին շատ հեշտ է նրանց նկատել աչքով, բայց և այնպես հաշվի առնելիս պետք է շոշափել անասնի մարմինը, ձեռքը քսել մեջքին և հաշիվը կատարել տնտղելով: Յերբեմն բոռի խոցը կարելի յե շփոթել հասարակ ուռիցքի և թարախակալած բշտիկի հետ. կասկածելի դեպքում պետք է ուշի ուշով տնտղել մատնեքով, յեթե ներսում զգացվում է ձվածիր մարմին, վոր սեղմելիս դեռ ու դեն է ընկնում՝ ապա դա բոռի թրթուրն է: Թարախակալած բշտիկները կամ ուռուցքները լինում են կամ փափուկ, կամ ամբողջապես պինդ:

Նայելիս պետք է հաշվել՝ քանի կով, յեղ, հորթ և յերինջ ունի տնտեսությունը, քանիսն են վարակված գրանցից և քանիսի վրա նկատվել էյին բոռի խոցեր:

30. Այսպիսով, տեղեկություն ունենա-

լով ամեն մի տնտեսության կամ անասնախմբի մասին, բրիզադիրը պարզում է, թե ինչքան թույն և գործիքներ են հարկավոր և բաշխում է բանուժը: Աշխատանքների ոպերատիվ պլան կազմելը հենց թրթուրների վոչնչացման նախապատրաստական աշխատանքն է:

31. Թույնի ու բանուժի կարիքը պարզված է: Անհրաժեշտ է բաշխել բանուժը: Պետք է հիշել, վոր շատ դեպքում մեկ կամ յերկու որից անց անհրաժեշտ է կրկնել այն թրթուրների մշակումը վորոնք դեռ կենդանի յեն մնացել, իսկ 15-20 որից. հետո մի անգամ ել, վորովհետև թրթուրների մի մասը կարող է կաշվի տակից ուշ դուրս գալ և խուսափել բուժումից: Իհարկե, այդ կրկնվող բուժման պետք և նախորդի բրիզադիրների կատարած հետազոտությունը:

32. Այսպես, բոլոր չրջաններն ու անասնախմբերը բաժանվում են խմբերի միջև, և յուրաքանչյուր խմբին տրվում է արտադրական առաջադրություն և անհրաժեշտ սարքավորում:

Խմբերի սարքավորումը բաղկացած է.

1. Թունավոր նյութերով յեցուն սպակե անոթներից և յերկաթե տուփերից.

2. Սրակիչներից, յուղղանից, շպաղիլներից կամ փայտե թիակներից (կարելի յե ամեն մի խմբին տալ գրչահատ տեղում փայտե թիակներ շինելու համար):

3. Կեռ պինցեաներից, մկրատներից և կտորոցներից (սկալպել) :

4. Դեզինֆեկցիայնող նյութերով շշերից (բորակային թթվուտի լուծույթ՝ մանգանի թթու կալիինի 0,5 լուծույթ և այլն) :

5. Խալթներից՝ խմբի անդամների քանակի համեմատ :

6. Սրբիչներից և սապոնից :

Արատադրական սուաջադրությունն ստացած խումբը գալիս է տնտեսության (խորհտնտեսության բաժանմունք, անասնախումբ) և անցնում աշխատանքի :

Անասուններին ախոռի մեջ պահելիս բուժումը պետք է հարմարեցնել այն ժամանակին, յերբ անասունը կերի վրա յե : Բուժում են շարք առ շարք, ընդվորում ավագ բանվորը նայում է անասուններին, վաշու բոռի թրթուրներ է հայտարարում, նախապատրաստում է խոցերը և անցնում թրթուրների վոչնչացման—նախ մի կողից, ապա՝ մյուս : Ոժանդակ բանվորն անցնում է գլխի կողմը և բռնում կենդանուն : Յեթե անասունը շատ է անհանգրստանում, դործադրում են հետևյալ մեթոդը աջ կամ ձախ ձեռքի ցուցամատով և բութ մատով բռնում են պնչերը և դունչը մի կողմ շուտալիս :

Անասուններին արոտատեղում մշակելիս անհրաժեշտ է ունենալ մեծ թվով բանվորներ, վորովհետև անասուններին պետք է քշել փա-

բախը և այնտեղ բռնել : Այս դեպքում անասնին մեկը մյուսի յետքից թողնում են փարախը : Ավագ բանվորը նայում է նրանց և, թրթուրներ հայտարարելով, մշակում է : Փարախում անասնին հեշտությամբ կարելի յե պահել թողով՝ յեղջուրները կապելով փարախի սյուններից մեկն ու մեկին :

Ավագ բանվորն աշխատանքը վերջացնելով, հաշվի յե առնում, թե վորքան անասուն է բուժված, հաշվի յե առնում ամեն մի բանվորի կատարած աշխատանքի վորակը և այլն : Բրիգադիքը պարբերաբար ստուգում է հաշվառքային նյութերը և խմբի աշխատանքի վորակը՝ ներկա գտնվելով աշխատանքներին և աշխատանքներից հետո հետազոտելով անասուններին :

Կաշու բոռի թրթուրները ձեռքով հանելիս կարելի յե հաշվառման նպատակով թրթուրները հավաքել Փորմալին լցրած շշերը կամ բանկաները, իսկ հետո, հաշվելով դրանք, համեմատել հետազոտության հետևանքի հետ պարզելու, թե արդյոք բոլոր թրթուրները վոչնչացված են, թե վոչ :

Հաստատեց Խ. Ս. Հ. Մ. Խոզոպետովի և Բեկեյնի :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵԶ
Հեղինակի կողմից . . . . .	3
Ինչ պե՞տ է գիտենալ բոռի մասին . . . . .	5
Բոռը պոսրաս է լույս աշխարհ գալու . . . . .	7
Հասուն բոռը . . . . .	10
Պարագիսի թրթուրը կենդանու մարմնում . . . . .	13
Կովի բոռի վնասը . . . . .	17
Ձիու բոռը . . . . .	20
Վոչխարների բոռը . . . . .	23
Գորեխ կամ բոռեխ . . . . .	27
Իչպես պայտարել բոռի դեմ . . . . .	28
Իչպես կազմակերպել պայտարը . . . . .	30
Կովի բոռի դեմ պայտարելու միջոցները . . . . .	31
Ձիերի բժեկումը բոռերից . . . . .	38
Վոչխարների բժեկումը . . . . .	39
Ինչպես չպե՞տ է պայտարել բոռի դեմ . . . . .	40
Հրահանգ հովիներին . . . . .	42
Բոռերի դեմ պայտարի կոլեկտիվորեն . . . . .	43
Հրահանգ . . . . .	44



Բարձր. Ա. ՍՏԱՄԲԱՆՅԱՆ  
Յեթևան, Գևորգյանի Ճպարան

Պատ. 679. Գլավիա 8092(բ) հր.2520. Տիրամ 2000

Հանձնված է արտադրություն 10 մարտի, 1933  
Ստորադրված է ապագրելու 2 ապրիլի 1933



8449

Գրք 50 Կ.

with  
50 2

